ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 2

(օրինակելի ձև)

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 4

ԿԱԴԱՍՏՐԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՄԱՄՆԱՃՅՈՒՂԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

ՀՀՈստիկանության ՊՊԳՎ Եղեգնաձորի պահպանության բաժանմունքի պետ ի դեմս ոստիկանության մայոր Արտակ Պարգևի Բաղալյանի

(կոչումը, պաշտոնը, Ա.Հ.Ա.)

(այսուհետև ''Պահպանություն'') մի կողմից և ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետ. կոմիտե

(հիմնարկ – ձեռնարկության անվանումը)

ի դեմս ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետ՝ Վարդան Հասրաթյանի (այսուհետև ''Տնտմարմին'') մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. "''Տնտմարմինը'' հանձնում, իսկ ''Պահպանությունն'' ընդունում է (իրականացնում է) ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետ. կոմիտեի աշխատակազմի ՎՁՄ ստորաբաժանում

(նշել օբյեկտի անվանումը և հասցեն)

պահպանությունը:

1.2. Օբյեկտի պահպանության համար ''Պահպանությունը'' ձևավորում է ոստիկանության, ռազմականացված կամ պահակային ծառայության (անհրաժեշտն ընդգծել) Մոնիտորինգի կենտրոնի միջոցով միավոր աշխատակիցներով:

(թվաքանակը) (թվաքանակը)

Պահպանության հանձնվող ենթաօբյեկտների ցանկը և պահակետերի ընտրությունը կատարվում է պայմանադիր կողմերի փոխադարձ համաձայնությամբ և հետագայում միակողմանիորեն փոփոխման ենթակա չէ (ցանկը կցվում է պայմանագրին և հանդիսանում է նրա բաղկացուցիչ մասը):

1.3. Պահպանության կողմից յուրաքանչյուր օբյեկտ, ենթաօբյեկտ, առանձին շենք, սենյակ կամ պահատեղ պահպանության ընդունելու, դրանք Տնտմարմին հանձնելու, դրանց տարածքում հասարակական կարգ ապահովելու կամ անցագրային ռեժիմ իրականացնելու կարգը ամրագրվում է սույն պայմանագրով, նշելով Աշխատանքային օրերին ժամը 22^{00}-ից մինչև 08^{00}, ոչ աշխատանքային և տոնական օրերին իրականացվում է 24

(աշխատանքային, հանգստյան և տոնական օրերին իրականացվող ծառայությունների սկիզբը և ավարտը, օբյեկտի)

ժամյա պահպանություն: Ապահովված է էլ. ձայնային և հրդեհաահազանգման սարքավորումներով,

(տեխնիկական ամրացվածության վիճակը, պարիսպների, ենթապարիսպների, դռների, ճաղապատված պատուհանների, կողպեքների,կնիքների)

Տեխնիկապես գտնվում է բավարար վիճակում: Պատուհանները, մուտքի դուռը

(կապարակնիքների առկայությունը, ահազանգման, կապի և հակահրդեհային միջոցների շահագործման պայմանները (տեղադրելը, սպասարկելը)

բավարար վիճակում են: Տեղադրված է էլ. ձայնային անվտանգության համակարգ և միացված է մոնիտորինգի կենտրոնին :

(փակելը կամ վերանորոգելը), Էլեկտրամատակարարման, այդ թվում պահեստային սնուցման աղբյուրների առկայությունը, հսկիչ անցագրային կետերը)

(տեղաբախշվածությունը, օբյեկտում պահվող դրամական միջոցների, թանկարժեք մետաղների և քարերի, դրանցից պատրաստված արտադրանքի, զենքի)

(գինամթերքի, թմրանյութերի առկայությունը, չափը և այլն)

1.4. Պայմանագիրն իր հավելվածով կազմվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԸ

2.1. Կատարված ծառայությունների համար Տնտմարմինը վճարում է վարձ՝ ամսական 62 500 . /վաթսուներկու հազար հինգ հարյուր / դրամի չափով:

2.2. Վարձի վճարումները Տնտմարմինը կատարում է ամեն ամիս՝ մինչև հաջորդ ամսվա հինգը ներառյալ:

2.3. ՀՀՈ համակարգի աշխատակիցների աշխատավարձի, ինչպես նաև զինծառայողի հատուկ կոչումների դրույքաչափերի փոփոխման դեպքում պայմանադիր կողմերը փոխադարձ համաձայնությամբ, վերահաշվարկում են պայմանագրային ամսական գումարի չափը, որի մասին պայմանագրում կատարվում է համապատասխան փոփոխություն:

3. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. ՏՆՏՄԱՐՄՆԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1.1. Ստեղծել անհաժեշտ պայմաններ Պահպանության կողմից օբյեկտի պահպանությունը և նրա տարածքում հասարակական կարգի ապահովումը պատշաճ կատարելու համար:

Փակել, կնքել (կապարակնքել) ընդունում-հանձնումը կատարվում է պատասխանատու անձի և մոնիտորինգի կենտրոնի միջև

ու այլ անհրաժեշտ տեղերը՝ ըստ ցանկի)

և կատարել դրանց ընդունում-հանձնում այդ վիճակում:

3.1.2. Միջոցներ ձեռնարկել օբյեկտի տեխնիկական ամրացվածության վիճակի հետազոտման մասին կազմված ակտերում արձանագրված թերությունները նախատեսված ժամկետներում վերացնելու ուղղությամբ:

3.1.3. Խանութների, արհեստանոցների և սրահների՝ ապրանքներով և արտադրանքի նմուշներով կահավորված ցուցափեղկերը փակել և կնքել (կապարակնքել) նաև օբյեկտի ներսից: Դրանցում ցուցադրված ապրանքանյութական արժեքների համար կազմել գույքացուցակ՝ իրերի տեխնիկական չափանիշների և գների նշումով: Գույքացուցակի մեկ օրինակը թողնել ցուցափեղկում, երկրորդը՝ Տնտմարմնի նյութական պատասխանատու անձի մոտ, իսկ երրորդը՝ հանձնել ''Պահպանությանը'':

ՀՀ կառավարության որոշումներով պահպանության ենթակա օբյեկտների համար պայմանագրի գինը հաշվարկվում է ելնելով ՀՀՈ և ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունների կողմից հաստատված նորմատիվներից:

3.1.4. '' Պահպանությանը'' տեղյակ պահելով օբյեկտում թանկարժեք մետաղների և քարերի, դրանցով պատրաստված արտադրանքի, դրամական միջոցների և արժեքների ,հնաոճ իրերի, զենքի , ռազմամթերքի, թմրամիջոցների, հոգեմետ, ռադիոակտիվ նյութերի և իզոտոպների առկայության մասին:

3.1.5. Թանկարժեք մետաղները և քարերը, դրանցից պատրաստված արտադրանքը, դրամական միջոցներն ու արժեթղթերը, հնաոճ իրերը, զենքը, զինամթերքը և թմրադեղերը պահել չայրվող կամ հատակին ամրացված մետաղյա պահարաններում, որոնք պետք է տեղադրված լինեն անվտանգության երկու կամ ավելի բնագծերով շրջափակված շինություններում:

3.1.6. Առանց '' Պահպանության'' գիտության օբյեկտում չպահել թանկրժեք մետաղների և քարերի, դրանցից պատրաստված արտադրանքի , ինչպես նաև դրամական միջոցների և արժեթղթերի ավելի քանակություն, քան նշվել է սույն պայմանագիրը կնքելու ժամանակ:

3.1.7. Միմյանցից մեծ հեռավորության վրա տեղաբաշխված ենթաօբյեկտների պահակետերը ապահովել ներքին հեռախոսային կամ այլ կապով: Ոչ աշխատանքային օրերին օբյեկտի քաղաքային հեռախոսագծերից մեկը տեղադրել '' Պահպանության'' աշխատակիցների համար մատչելի տեղում:

3.1.8. Սահմանված ժամին օբյեկտը պահպանության հանձնելիս միացնել նյութական արժեքների պահատեղերի պահպանության ահազանգման միջոցները (եթե այդպիսիք կան) , դրանց անսարքության մասին անհապաղ հայտնել '' Պահպանությանը'' և չթողնել օբյեկտը մինչև անսարքության վերացումն ու սույն պայմանագրով նախատեսված կարգով այն ''Պահպանությանը'' հանձնելը:

3.1.9. Օբյեկտի ամբողջականության խախտման նշանների հայտնաբերման դեպքում , ''Պահպանության '' պահանջով, ոչ աշխատանքային ժամերին ներկայանալ այնտեղ՝ ի հայտ եկած թերությունները պարզելու և դրանք վերացնելու համար:

3.1.10. Օբյեկտում անցագրային և ներօբյեկտային ռեժիմ սահմանելու դեպքում ''Պահպանության'' հետ համատեղ հաստատել դրա կիրառման կարգը:

3.1.11. '' Պահպանությունից'' օբյեկտն ընդունելիս հանցագործության կատարման կամ նրա ամբողջականության խախտման կասկած հարուցող հետքերի և նշանների առկայության մասին անմիջապես հայտնել "Պահպանությանը":

3.1.12. "Պահպանությանը" մեկ ամիս առաջ գրավոր տեղեկացնել պայմանագիրը միակողմանի դադարեցնելու, ինչպես նաև օբյեկտի հիմնական վերանորոգման և վերասարքավորման, սահմանված դեժիմի գործունեության ուղղությունների փոփոխման կամ այնպիսի միջոցառումների անցկացման մասին , որոնց հետևանքով հնարավոր է օբյեկտի պահպանության բնույթի փոփոխության կամ պահակետերի վարաբաշխման անհրաժեշտություն:

3.1.13. Պայմանագրի լուծման դեպքում 5-օրյա ժամկետում ապահովել "Պահպանությանը" ունեցած պարտքերի մարումը, ինչպես նաև սույն պայմանգրի 3.1.12. կետի պահանջների խախտմամբ պայմանագիրը դադարեցնելու հետ կապված բոլոր ծախսերի վճարումը:

3.1.14. "Պահպանությանը" անվճար հատկացնել ծառայական և օժանդակ շինություններ, գույք, կապի միջոցներ և այլ սարքավորումներ, ինչպես նաև մատուցել անվճար կոմունալ ծառայություններ:

3.1.15. Սարքավորել և բարվոք վիճակում պահել ծառայողական շներին հատկացված շինությունները և պահակետերը, եթե պայմանագրով նրանց ծառայության մեջ ընդգրկելը նախատեսված է:

3.1.16. "Պահպանության" աշխատակիցներին ծանոթացնել աշխատանքի անվտանգության տեխնիկայի կանոններին, եթե վերջիններիս կողմից իրենց պարտականությունների կատարման ժամանակ կա դրանք պահպանելու անհրաժեշտություն:

3.1.17. Առողջության համար վնասակար պայմաններում ծառայություն կատարող "Պահպանության" աշխատակիցներին ապահովել օբյեկտի աշխատակիցների համար օրենքով նախատեսված արտոնություններով:

3.1.18. Ժամանակին կատարել "Պահպանությանը" հասանելիք վճարումներ:

3.2. ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.2.1. Կազմակերպել և ապահովել Տնտմարմնի կողմից իր պահպանությանը հանձնված օբյեկտների հուսալի պահպանությունը հափշտակումներից և վնասումներից:

3.2.2. Սահմանված կարգով Տնտմարմնից ընդունել սույն պայմանագրի 3.1.1. կետի համապատասխան դրված կնիքները և կապարակնիքները, այդ մասին նշում կատարել երկկողմանի հաստատված ձևի մատյանում:

3.2.3. Պահպանվող օբյեկտների փակ պահատեղերում հրդեհի նշանների հայտնաբերման կամ պահպանության հրդեհային ազդանշանիչներից ստացված տագնապի մասին անհապաղ հայտնել հրդեհային հսկողությանը և Տնտմարմնին: Եթե հրդեհը ծագել է օբյեկտի բաց տարածքում , միաժամանակ ձեռնամուխ լինել դրա մարմանը:

3.2.4. Ապահովել անցագրային ռեժիմի կիրառումը, եթե այդպիսին Տնտմարմնի կողմից սահմանված է:

3.2.5. Ապահովել հասարակական կարգն ու անվտանգությունը օբյեկտի տարածքում:

3.2.6. Իրականացնել պահպանության ազդանշանային միջոցների շահագործման , սպասարկման և անսարքությունների վերացման աշխատանքները, եթե այն նախատեսված է սույն պայմանագրով:

3.2.7. Ստանձնած պարտավորությունները կատարել միայն իր ուժերով:

4. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1. "Պահպանությունն" իրավունք ունի.

ա) Տնտմարմնից պահանջել ապահովելու սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ժամանակային և պատշաճ կատարումը.

բ) Տնտմարմնի կողմից պարտավորությունների պարբերաբար խախտման դեպքում միակողմանի դադարեցնել պայմանագիրը.

գ) Տնտմարմնից պահանջել կատարելու օբյեկտի հետազոտման ակտերում նշված թերությունների վերացմանն ուղղված միջոցառումները.

դ) Գողությամբ կամ այլ ոտնձգություններով Տնտմարմնին պատճառած նյութական վնասի չափը որոշելու համար մասնակցել ապրանքանյութական արժեքների մնացորդների , հաշվարկման և դրանք դեպքի կատարման օրվա հաշվապահական տվյալների հետ համեմատելու աշխատանքներին:

4.1.2. Տնտմարմինը իրավունք ունի.

ա)"Պահպանությունից" պահանջել կատարելու սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարումը.

բ) ցանկացած ժամանակ ստուգել "Պահպանության" կողմից ծառայությունների մատուցման ընթացքը և որակը առանց միջամտելու նրա գործունեությանը.

գ) "Պահպանության" կողմից պարտավորությունների պարբերաբար խախտման դեպքում միակողմանի դադարեցնել պայմանագիրը:

4.2. "Պահպանության" պատասխանատվության պահն սկսվում է Տնտմարմնից օբյեկտը սահմանված կարգով պահպանության ընդունելու և ավարտվում է այն ամբողջական վիճակում Տնտմարմնին հանձնելու պահով:

4.2.1. "Պահպանությունը" պատասխանատվություն է կրում այն վնասի համար, որը նրա կողմից անհրաժեշտ պահպանություն չիրականացնելու հետևանքով հասցվել է տնտմարմնին՝ օբյեկտի պարիսպը, շենքերի պատերը, պահատեղերի քանդելու , դռները, պատուհանները, ցուցափեղկերը, դրանց փականներն ու կողպեքները ջարդելու միջոցով կատարված հափշտակությամբ, գույքի ոչնչաչացմամբ, փչացմամբ կամ հրկիզմամբ:

4.3. Տնտմարմինը պատասխանատվություն չի կրում սույն պայմանագրի 4.1.2. կետի »բ« ենթակետի կարգով պայմանագիրը միակողմանիորեն դադարեցնելու հետ կապված "Պահպանությանը" պատճառվելիք վնասի համար:

5. ՖՈՐՍ_ՄԱԺՈՐ

5.1. "Պահպանությունը" պատասխանատվություն չի կրում .

ա) Տարերային աղետների հետևանքով պատճառված նյութական վնասի համար

բ) Բանդիտական կամ ավազակային հարձակման հետևանքով պատճառված վնասի համար, եթե քննությամբ ապացուցվի, որ այն կանխելու հնարավորություն "Պահպանությունը" չի ունեցել:

գ) այն նյութական արժեքների ամբողջության համար, որոնք չեն գտնվել փակ շինություններում և սահմանված կարգով "Պահպանությանը" հանձնված չեն եղել.

դ) թանկարժեք քարերի և մետաղների , դրանցից պատրաստված արտադրանքի, հնաոճ իրերի, դրամական միջոցների և արժեթղթերի, թմրադեղերի, զենքի, ռազմամթերքի բարձրարժեք այլ արտադրանքի հափշտակության, ինչպես նաև ոչնչացման կամ վնասի համար, եթե դրանք պահվել են սույն պայմանագրի 3.1.3., 3.1.4., 3.1.5., 3.1.6. կետերի պահանջների խախտումով.

ե) Տնտմարմնի աշխատակիցների անձնական իրերի և այն նյութական արժեքների կորուստի համար, որոնք աշխատանքի ավարտից հետո պետք է պահվեին հատուկ պահատեղերում, սակայն թողնվել են աշխատատեղերում.

զ) այն վնասի համար, որն առաջացել է Տնտմարմնի կողմից սույն պայմանագրի 3.1.1., 3.1.2., 3.1.8., 3.1.11. և 3.1.12 կետերով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետևանքով.

է) այն վնասի համար, որի հաշվարկը Տնտմարմինը կատարել է սույն պայմանագրի 6.2. կետի պահանջների խախտումով:

6.ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

6.1.Սույն պայմանագրի կատարման ընթացքում կողմերի միջև ծագած վիճելի հարցերն ու տարաձայնությունները լուծվում են փոխադարձ համաձայնությամբ կամ օրենքով նախատեսված կարգով:

6.2. Գողության կամ այլ ոտնձգությունների հետևանքով Տնտմարմնի գույքը հափշտակելու , ոչնչացնելու կամ վնաս պատճառելու դեպքերում կողմերը կատարում են օբյեկտի համատեղ գույքագրում և պատճառված վնասի հաշվարկ:

Միակողմանի կատարված գույքագրումը կամ վնասի հաշվարկը իրավաբանականն ուժ չունի:

6.3. Հափշտակված և հետագայում հայտնաբերված ապրանքանյութական արժեքները վերադարձվում են Տնտմարմնին: Դրան հետ վերադարձման աշխատանքներին "Պահպանության" ներկայացուցչի մասնակցությունը պարտադիր է:

Վերադարձված ապրանքանյութական արժեքների գինը հայտնվում է Տնտմարմնի կողմից դրանց դիմաց նախապես հաշվարկված գնից, իսկ "Պահպանության" կողմից վճարված գումարները ենթակա են վերադարձման:

6.4. Նյութական վնասի հատուցման մասին պահանջը քննարկվում է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված կարգով և ժամկետներում:

6.5. Նյութական վնաս պատճառելու "Պահպանության" մեղքի առկայությունը և հասցված վնասի չափը որոշվում է իրավասու մարմինների կողմից և փոխհատուցում նրանց որոշումների և վճիռների հիման վրա:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

_____.

(անհրաժեշտության դեպքում նշել օբյեկտի պահպանության հետ կապված և սույն պայմանագրով չնախատեսված)

_____.

(լրացուցիչ պայմաններ (հատուկ նշանակության արտադրանքի պահպանություն. բեռների և նյութական արժեքների ուղեկցում)

_____.

ծառայողական շենքի օգտագործում , դրանց հետ կապված ծառայությունների հատուցում և այլն))

8. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՒՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐՆ ՈՒ ԼՈՒԾՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ

8.1. Սույն պայմանագիրը կնքված է մեկ տարի ժամկետով և ուժի մեջ է մտնում 15 02 2018 թ -ից:

8.2. Եթե պայմանգրի ժամկետը լրացել է և կողմերից ոչ մեկը չի պահանջում դրա դադարեցում , ապա պայմանգիրը համարվում է անորոշ ժամկետով կնքված, որից հետո կողմերից յուրաքանչյուրը ցանկացած ժամանակ կարող է պահանջել դրա դադարեցում՝ մեկ ամիս առաջ տեղեկացնելով մյուս կողմին:

8.3. Պայմանագիրը վաղաժամկետ կարող է լուծվել սույն պայմանագրի 4.1. կետի »բ« և 4.1.2. կետի »բ« ենթակետերում նշված հիմքերով:

8.4. Այլ պատճառով օբյեկտի պահպանության մասին պայմանագիրը ժամկետից շուտ լուծել թույլ է տրվում օրենքով նախատեսված կարգով:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐՆ ՈՒ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

"Պահպանություն" ՀՀՌ ՊՊԳՎ ԵՂԵԳՆԱՁՈՐԻ Պ/Բ, ՄԻԿՈՅԱՆԻ 18
ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՊԲ Հ/Հ 900353301014
(0281) 2-33-78
(հեռախոս)

Տնտեսական մարմինՔ.Երևան Արշակունյաց 7

ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի
Պետական կոմիտե / հեռ.010-56-06-21, 0281-2-55-59 /

ՀՀ Ռ ՊՊԳՎ ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՊԵՏ, ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ

ՄԱՅՈՐ Ա.ԲԱԴԱԼՅԱՆ

ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի
Պետական կոմիտե-ի աշխատակազմի ղեկավար

Վ.ՀԱՍՐԱԹՅԱՆ

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. Սույն կարգը չի տարածվում պետական պահպանության ենթակա օբյեկտների պահպանության, կարճաժամկետ կամ միանգամվա ծառայություններ մատուցելու վերաբերյալ կնքված պայմանագրերի վրա: